և յաւուրց անտի նահապետին Նոյի ասեն սկսեալ փորել. գլխաւոր գոգ աղահանիցն ձգի 150 ոտս ընդ երկայնն։ Հայոց ումեմն յանձնեալ է Ռուսաց տէրութեան զաղահանքս և առնու բաժ 50,000 ֆիրանգաց, ամի ամի հատանի աղ բաւական՝ ի պէտս 550,000 մարդկան։ Գոյ և լճակ մի աղի առ Դալ-պոռոռն գիւղիւ յոտս ոստոյ միոյ Արարատայ յորում բնակին 75 տուն Հայք։ — Յելից Կողբայ կայ Սուրմալու գեօղ, և 'ի հիւսիսոյ Նորա յանկեան խառնրդոց Ձնչաւատայ յԵրասխ՝ յ'2850' բարձու՝ Գոբոպուն աւերակ հնոյ քաղաքի կամ աւանի, ամրացելոյ հզօր պարսպօք և քարաժեռիւք. են առ նովաւ մեծամեծ դերեզմանք յոլովք Հայոց և Թաթարաց։ Միւս ևս նշանաւոր տեղն աւերակաց է Ամուդ գեօղ առ նովին ափամբ գետոյն հեռագոյն կիսօրեիւ։ Ի հարաւոյ սոցին և 'ի մոլոր Դաշպուռուն լերին կայ Իկոիր կամ Իկոիր գեօղ մեծ 130 հայ գերդաստանօք։

137. Ի հարաւակողմն արևելից գաւառին Սուրմառոյ, միջասահման բաժնի երկոցն ինքնակալութեանց՝ ընդ որս այժմ բաժանեալ է աշխարհս Հայոց, ամբառնան յաւերժական արձանք երկրի տիեզերահրաշակ ԼԵՐԻՆՔՆ ԱՐԱՐԱՏԱՑ, յանուն մեծի դաշտին (յորոյ հարաւակողմն կան), և գլխաւորի աշխարհաց կամ նահանգաց երկրիս Հայոց՝ Այրարատայ, և սա յանուն Արայի Գեղեցկի, ըստ հնապատում աւանդութեանց ազգիս. յիշեն և Ս. Գիրք զլերինս Արարատայ 'ի սկզբան անդ պատմութեան աղանց, 'ի ձեռն Մովսիսի մարգարէի, իբր չորիւք ևեթ դարուք յետ Արայի կացելոյ, և 'ի նոսին վկայեն զնիստ տապանին։ Բնիկ անուն լերանցս՝ առ տեղացիսն պահի առ Հայս, ՄԱՍԻՒ կոչեցեալ և Լէրին Մասէոյ, և յաճախ ևս Մասի զբարձրագոյն կատարն իմանալով. և զայս՝ յանուն Ամասիայ նահապետի նախահաւուն Արայի ասեն կոչեալ, (որ և շինեաց յարևմտից հիւսիսոյ լերինն զՓառոնոպ և զՑուլէրպ աւանս), և կամ Մարտակայ ընդօծնի Աբրահամու հատուածելոյ յԻսահակայ 'ի Հայս, ըստ այլոց պատմչի։ Կոչի և այլ պէսպէս մակագրական անուամբք, Աղաբ, Աւագ, Թոխ, Մրին, Սէս-լեռն, և 'ի ռամկաց Մոռ աղխարհ, լեռն Նոյի 'ի Պարսից, և Աղը կամ Աղբ տաղ 'ի Թուրքաց։ Անուանի 'ի սկզբանցն և այսր, վասն տապանին 'ի նմա հանգստեան, և երկրորդ խանձարուրք մարգկութեանս լինելով. յոր սակս և արդարապէս կարգի ընդ սրբազան տեղիս, և ուխտադնացութեամբ պատուեալ է անդստին 'ի վաղ ժամանակաց հեթանոսութեան և 'ի դարս քրիստոնէութեան. և բաղում առասպելս և զրոյցս յօգեալ է զնմանէ վիպասանիցն Հայոց դիցազաշխից. նշանաւոր է և վասն բարձրութեանն, զի յետ կովկասեանն Էլպուրզայ առաջին է բարձրութեամբ 'ի լերինս արևմտեան Ասիոյ, ունելով յերեսաց Սեաւ ծովու 'ի վեր 16254'. և ևս առաւել վասն բարձրագիտակ կերպարանացն շեղջաձև ամբարձմամբն, որպէս յարևմտեան հարաւային կողմանց՝ յերեսաց դաշտին Երասխայ վերամբառնայ ոտս ոչ պակաս քան զ'13500, ահեղ իմն և գերահրաշ տեսլեամբ, զոր գրեաթէ չիք այլուրեք տեսանել, ոչ 'ի Կովկաս և ոչ 'ի հսկայսն երկրի 'ի լերինս Հնդկաց և Անդեայց Ամերիկոյ. այսպէս և ըստ հեռուստ վայրաց 'ի տես գալոյ՝ ըստ ոմանց գրեաթէ զամենեքումբ գլէ, հաւասարելով յայսմ ծայրագունին լերանց Հիմալայայ, նշմարեալ յափանց Կազբիականին 'ի բացէ 200 և աւելի մղոնաց։ Երրորդ անգամ, զարմանալի և բնութեամբն, այսինքն է կազմուածոն, գոլով միատանի որձաքար պորփիւր ցցուեալ յերկրի, և հրաբուխ ահաւոր շինեալ 'ի հազարաց ամաց, այլ ոչ խսպառ դադարեալ. հիւսիսային սառոտաքն երկայնեալ տարածին 'ի դաշտն Երասխայ, խորոփեաք և քարակարկառ կոհակք, արևելակողմն խճախառն և աւազուտ, ըստ հարաւոյ կուսէ անձուկ լեռնադաշտակաւ կցեալ ընդ այլում լերին որ Փոքր Մասիս կոչի, և երրորդ է բարձրութեամբ 'ի չափեալ կատարս լերանցն Հայոց, ունելով 12284', իսկ արևմտեան ոտքն 'ի լերինս մանուսն յանդին։ Ի հատարակի ատորին կողմանքն աւազուտք և առատարք են, միջավայրքն բուսաբեր և քարուտ, և քարինքն յաճախակի լաւա, պորփիւր, բուցցոլեան հող, աւազ և աղ ինչ. այլ բաղում ուրեք անհեգեդք և խառն 'ի խուռն իմն կառուցեալք, 'ի մեծ և 'ի բուռն ցնցմանց երկրի կերպարանեալք. և վերնակողմն յ'12000 ոտից և 'ի վեր համակ ձիւնապատ է 4000 ոտնեայ վերարկուաւ անլուծանելի սառամանեայ. և 'ի քղանցից անտի սառամանեայցն 'ի հիւսիսոյ կուսէ ցդեօղն Արկուռի՝ պատառեալ է լեառնն 6000 ոտս ընդ խոնարհ. 'ի վաղնջուց ուրեմն հրաբուխ վերաշնչմանց, զոր յիշէ և մերս վիպահայր Մովսէս խորոնեցի, և Վէհ Մասէոյ կոչէր կամ Փլածնռծ, յորում արգելեալ ասէին վիպասանքն Հայոց զԱրտաւազդ արքայ և 'ի Քաջաց պահեալ, զի մի ելեալ և աշխարհի աւեր և վախճան հասուցէ. ընդ այն խաղային ուղիք 'ի հալից ձեանց։ Ի կուշտ մի քարակոհակ վերին շինեալ էր մենաստանն Ս. Յակոբ. 'ի տեղւոջ դադարման Մծբնեցւոց հայրապետին՝ յելանել իւրում 'ի խնդիր փայտից նոյեան տապանին, ըստ աղգիս մերոյ աւանդութեան, մենաստան փոքր և պարսեղ. և 'ի վերոյ լուսաղբիւր ջնջիչ մարախոյ յ'7620' բարձրութեան։ Ատորև քան զսա կայր Ակոռի կամ Աբիռոռի գիւղ 'ի 5982' բարձու, 'ի տեղւոջ այգեոյն անկելոյ 'ի Նոյայ, ըստ աւանդութեան, առ որոյ յիշատակէ անկեալ դարմանելին այգիք ատորև 'ի 4013' բարձու. իսկ 'ի գեղջն բնակին 300 տուն Հայոց, և ունէին եկեղեցի հին և գերեզմանատեղի հազարամեայ արձանագրովք, ցամ տեառն 1840. յորում 'ի քսաներորդի աւուր ամսեան յունիսի՝ սասանութիւն մեծ եղև 'ի դաշտին և 'ի լերինս Արարատայ, որ և ընդհատ և նուազ ժամիւք տևեաց աւելի քան զերկու ամիս, կենդրոն ցնցմանց ունելով զբարձրն Մասիս. որոյ յետ բաղում դարուց 'ի յուշ իմն բերեալ զնախկին հրամուղ եռանդն, ահեղ ոլոտմամբ և վերապատառմամբ արձակեաց բոցախառն ծուխս սեաւ. և մեծապէս շարժեալ դղրդեցաւ, ինքն և դաշտն առհասարակ և անդրագոյնք ևս սահմանք. և մինչդեռ բաղում ուրեք երկիրն խորխոչեալ պատառէր, և շինուածք տապալեալ կործանեին, և դեռն Երասխ օժանդակաւք իւրովք ալեկոծեալ ընդ հուն